

578

L. I. 4

epistolary autograph
1915 of Nov. 23
of the year

177
Dr. xwip
177
21p

*Համար
1 հասկանալի թղթեր*

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԴՊՐՈՒԹԻՒՆՔ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ. ԳԻՏՈՒԹԻՒՆՔ. ԱՐՈՒԵԱՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

Ա. ՏԱՐԻ ԹԻՐ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 23 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 1896

40 ՓԱՐԱ 40

Տ Ե Ր Ե Ւ ԽՄԲԱԳԻՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Գրառ. 1, անհատ 12 15

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ

ԱՐԲԱՔԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Կենտրոնի Սեղանային

Կ. ՊՈԼԻՍ

Տպագրատուն Գաապար Գալստիլեան

ՀԱՅԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԹՎԵԹ

ՋԻՑԱՐԸՄԸՎՍ ԻՅ ՋԿՍՈՐԸՄ

ԳԴՊՈՒՄԻՆՈՒՄ ԻՅ ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ

ՈՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ

ՈՅ ՄԳՄՓ ՈՅ

ԳԴՊՈՒՄՆԱՆ ԻՅ ԳՅՈՒՄՆԱՆ

ՋԻՑԱՐԸՄԸՎՍ ՋԻՑԱՐԸՄԸՎՍ

ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ

ՋԻՑԱՐԸՄԸՎՍ ՋԻՑԱՐԸՄԸՎՍ

ԳՅՈՒՄՆԱՆ ԳՅՈՒՄՆԱՆ

ՍԳՂՈՐ Գ

ՋԻՑԱՐԸՄԸՎՍ ՋԻՑԱՐԸՄԸՎՍ


ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ԳՊՐՈՒԹԻՒՆՔ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ. ԳԻՏՈՒԹԻՒՆՔ. ԱՐՈՒԵՍՏՔ ԵՒ ՕՐԱԼՈՒՐՔ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 23 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 1896



ԳՈՀՈՒՆԱԿԱԼԻՔ

ԱՌ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԸՓԱՌՈՒԹԻՒՆ

ՄԵՆ ՂԱԶԻ ՍՈՒԼՔԱՆ ՀԱՄԻՏ Բ.

ԲԱՐԵՆՈՐՈԳԻԶՆ ԱՍԻՈՅ, ԵՐԿՐԻՆ ԵՒ ԱԶԳԻՆ

ՈՐ ԱՌԱՆՑՆԱՇՆՈՐՀԵՑ ԵՒ ՄԵԶ ՀԻՄՆԵԼ ՈՒ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ՀԱՆԱԳԻՏԱԿԸ

Հայ Մամլոյն ընծայուած վեհապետական այս Շնորհ ինձ պատկանել անելի կը պատկանի ԱԶԳԻՍ, Ոյր երկսեռ Հաւակաց ուսուցիչն եմ եղած, 25 ամեւէ ի վեր անընդհատ, եւ գրեթէ 25 հազարէ անելի Ուսանող եւ Ուսանողուհի կրթած, յորոց ամենեւին, ամենուրեք, թէ Պօլսոյ մէջ, թէ Դաւաղաց մէջ, եւ թէ Տար-աշխարհ փայլած են առ Տէրութիւնն եւ առ Ազգն սաժած իւր ենց անբասիր Հաւատարմութեամբը խնդիսացած են պարկեւտ Քաղաքացի-

ցեր, բարի Քրիստոնեաներ, Առաքինի Մարդեր, ժիր Աշխատուորներ, բոլորն ալ աւելի կամ նուազ օժտեալ այն համեստ ձիրքերով որք կ'օգտեն իրենց լինելու չափ օգտակար Տէրութեան, Ազգին, մարդկային ընկերութեան եւ ընտանեաց:

Նուպար-Շահնազար երանելի վարժարանին ուսմանոյ գրասեղանէս կոչուեցայ ուղղակի ուսուցչի բեմը, ուսուցչի բեմէս ալ կը կոխեմ մամուլոյ սեմը: — Սովորական թէ բնական բան մ'եղած է սա նշանակելի պարագան, ուր յաճախ վարժապետն երբ բոլոր դպրասունը կ'անցնի խմբագրասունը, կը լինի լրագրապետ. ինչպէս սեւայ երբ խմբագիրը ձգէ Տպագրասունը կը վազէ վարժասունը: Սա նշանակէ է թէ կարող ուսուցչապետը միայն եղած է միշտ կարող խմբագրապետը:

Շնորհակալ ենք Վեհափառ Սուլթանէն որ օժտեց Լրագիր - Հանդէսով մը մեզ հետ եւ Հայ Ազգն աւ Հայ մամուլը՝ որք միշտ կարօտ եւ դեռ շատ կարօտ են Կայսերական բազմադիմի եւ առասարբուխ Շնորհացը, որք գիտեն ու կարին անխտիր աղբերանալ իւր բոլոր հպատակացն նամար առ հասարակ:

Մեր Օգոստափառ Ինքնակալն իւր բարձր Տիտղոսին արժանաւոր պատգամը կը հանդիսանայ Գիտութեանց, Դպրութեանց եւ Արուեստից, որոց միայն կը պարտի մարդկութիւնն իւր փառափառութիւնը, կառավարութիւնը՝ իրենց ոյժը, ժողովուրդը՝ իրենց երջանկութիւնն ու խաղաղութիւնը, անհատ՝ իրենց փառքն ու համբաւ:

Այսու անգամ մ'ես աւելի հանդիսապէս հաւատեց թէ իբրեւ Օսմանեան Վեհապետ ինչպէս կը պայազատէ Գանդ, նոյնպէս եւ Ցեղին հետ կը ժառանգէ գրագիտութեան եւ յառաջդիմութեան Ոգին երջանկալիւսակ Ճաթինի, որ իւր արժանի սեղանին կը հրաշքէր երկրին գրագիտներն եւ Անոնց մէն միայն առջեւ նոնահատիկ աղամանդներով լի նուէրցու սկաւառակներ կը շարէ ի մեծարանա եւ ի փաշալէր իրենց Տաղանդին, սա հաւատով թէ փաշալէրութիւնը հանձնարոյ սնունդն է:

Ե՛րեւել այդ բարեբաւտիկ գրագիտաց որոց գրչի մելանը բուռ բուռ աղամանդներ կ'արժէ:

Վախճանողք իրենց հոգին առ Աստուած, այլ իրենց ոգին կ'առնեն ցեղին: Օսմանեան Վեհապետաց այս Տաղանդապատ եւ գրագիտապատգամն ոգին շարունակած է ց'այսօր աւելի բարգաւաճուն: Բաւ է պատմական այժմը նետել վերջին 20 տարիներու վրայ համոզուելու համար թէ Թուրքիոյ փառափառութիւնը առած է այնքան արագ անուր, զոր 20 դարերու մէջ թերեւս հազիւ կարող կը լինէր առնուլ երկիրն եթէ չի բախտաւորէր ունենալ մեզ Վեհապետ ներկայ կորովամիտ ու կորովակամ Օգոստափառ Սուլթանը, որ կը յարատեւ փառափառութիւն Թուրքիան եւ բարեկրօնայէր երկիրն բախտաւորէն նիւզ այն ոգով որով, ձեռնարկեցին ու գործադրեցին Մեծն Ֆրէտէրիք ի Բուսի, Մեծն Պետրոս ի Ռուսիա, Մեծն Կարոլոս ի Ֆրանսա, որոց երկիրն ու ժողովուրդը կը պարտին իրենց ներկայ նախանձելի եւ ընդօրինակելի փառափառութիւնը:

20 տարիներու մէջ՝ Պոլսոյ եւ Նոնահագաց մէջ՝ զօրանոցէ, պահականոցէ աւելի դպրոցներ շինուեցան, Օսմանեան Տպագրասունն ու գրասունն, ամէն տեսակ Լրագիր, Հանդէս եւրոպական նաշակով ու նոխանով 20 անգամներ աւելի բազմապատկեցան: Ամեն տարի գունդ գունդ օսմանցի ուսանողք լեցան եւրոպական ամեն ազգերու Գիտութեանց, Դպրութեանց եւ Արուեստից ուսումնարանները, գործարանները, արհեստարանները, մասնագէտք, լեզուագէտք, գրագէտք, տպագրութեան, գիտութեան, իմաստաստք, բանաստէր, բանաստեղծք, ուսուցիչք, եւ ուսուցչուհիք, ուսանողք եւ ուսանողուհիք թէ Մայրաքաղաքին եւ անոր Թաղերուն մէջ, թէ Նահանգաց եւ անոնց յետին գիւղերուն մէջ. ժողովուրդին

չափ՝ շահացանք ուրիշ հանրագոյն հաստատութիւնն եւ մեր չի գիտցած կամ չի նշմարած ներքին թէ արտաքին վերանորոգման կատարման ամեն շահական ամեն շահական եւ ժողովրդային ամեն խաւերու մէջ:

Այս ամեն հաղափարական բարիք պարտական են Նորին Կայսերական Վեհափառութեան՝ որ՝ իբրեւ հասարակաց բարեխնամ Հայր՝ ժողովուրդէն աւելի եւ վեր գիտէ եւ կը խորհի իւր ընդհանուր հպատակաց բարիքն ու օգուտը զոր, արդէն ինչպէս վայելեցին, որուն կը վկայէ աշխարհի արարած, եւ ինչպէս այժմ կը վայելեն Նորին Կայսերական Վեհափառութեան ծանօթ այն մեծամեծ ճշմարիտ ինչպէս են, վերջին ատեններս Ասիական Բարենորոգման, որոց գլխաւորութեան հռչակն արդէն բաւ է սփռուել ամեն կարգի Թուրքացի Հայոց արեւն ու մտքն: Նմանապէս Կայսերական կառավարութեան այն ընդհանուր Ներողամտութիւնն (Ասօր-Շահանէն), որով շատ մը սգաշուն իբրեւ հարսնէսուն պիտի լինի խնդաշուն:

Ընդհանուր Հայ Ազգեն հետ մեք եւս Հասարակաց բաժին եղող գոհունակութիւն յայնչեղ Նորին Կայսերական Վեհափառութեան եւ Ազգն ու Տէրութիւնը կառավարող Բարձր, Նախարարութեան կը մարտնչենք Արեւաշունչին եւ Յարաշունչին թէ իրենց եւ թէ մեր գործոյն, որ իրենց հաղափարական փափաքելի ձեռնարկին յետին լրացուցիչներէն մին լինել կոչուած է:

Կեցցէ՛ Մեծն ու Ղազին Վեհ. ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԽԱՆ Բ. որ իւր բարենորոգաւոր մեծագործ ոգովն կը շարունակէ ու կը բազմաւորէ դպրութեանց, Գիտութեանց, Արուեստից եւ Օրագրութեան նուիրեալ ամեն բարենպասակ Ձեռնարկները:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

— 0000 —

ՔԱՊԱԼԸ

Այս բառին երբայեցերէն բուն իմաստն է Ընդունելութիւն: ուրիշ իմաստով մ'ալ կը նշանակէ Աւանդութիւն:

Քապալը տեսակ մը վարդապետութիւն է՝ ըստ ձեւին՝ աստուածաբանական, իսկ՝ ըստ հիման՝ փիլիսոփայական եւ աւելի՝ բնագիտական, որ հրէից մէջ սկսաւ քրիստոնէական թուականէն երկու հարիւր տարի առաջ. եւ գաղտնի կերպով կը պահուէր անոնց քով մինչեւ 15րդ դարը. թուական՝ ուր քրիստոնէայ բանասէրք հետամուտ եղան ուսումնասիրել զայն:

Հրէայք՝ առ հասարակ՝ այս խորհրդաթաքուն վարդապետութեան անտեղեակ չէին բայց չէին համարձակեր անոր միջամուխ ըլլալ, կը նկատէին զայն իբրեւ սոսկալի գաղտնիք մը, որուն վերագրուած էին մեծամեծ վտանգներ եւ միանգամայն մեծագոյն զօրութիւն մը. խորայնի մէջ ամենէ աւելի անարտաքին ու ամենէ աւելի իմաստունն հազիւ անպատիժ կրնար լսել զայն: «Թալմուտ»ի մէջ կարդալու է զարմանալի պատմութիւնն այն հրաշքներու, զոր կատարած է Մերքա-

պահ»ը (քապալական գիտութեան ամենէ աւելի վսեմ մասն՝ այսպէս կը կոչուի) եւ այն վտանգները, որք զայն անմատչելի կընեն: Չորս հռչակաւոր վարդապետներ համարձակեր էին իջնել այս անդունդին մէջ, անոնցմէն մէկն հազիւ ողջ առողջ դուրս ելած էր: միւս երեքն հոն թողուցին կամ կեանքը, կամ խելքը, կամ հաւատքը:

Չափադանց տարբեր կերպով կը մեկնեն Քապալի ծագումը: Այս գիտութեան միջամուխները՝ որոց մէջ կան նաեւ շատ մը խորհրդաւոր քրիստոնէայեցիներ, ինչպէս են Ռէյմոնտ Լիւլ, Բի աք լա Միրանտա, Ռէօլէն, Կիյոմ Փօպէլ, Հէնրի Մօրիւս, կը համարեն զայն մարդկային սեռին չափ հին աստուածային աւանդութիւն մը:

Կենթադրեն թէ հրեշտակ մը՝ Րազիէլ՝ այսինքն խորհուրդներու հրշտակը՝ Աստուծոյ հրամանով եկաւ զայն սորվեցնել Ադամին այն պահուն, երբ սա երկրային դրախտէն արտաքսուած եւ անկման կորսնէքէն ընկճուած՝ գերագոյն օգնութեան մը պէտք ունէր վերականգնելու համար: Ուրիշներ նըռաւ յաւակնոտ՝ մինչեւ Մովսէս միայն կը հատցնեն անոր ծագումը. պնդելով թէ օրէնքին հետ միեւնոյն ատեն յայտնուած ըլլայ Սինա լեռան վրայ, եւ աւանդութեան վի-

ճակի մէջ պահուած՝ խմածոնոց սակաւաթիւ խմբի մը քով, մինչեւ Բարեւոյնի դերութեան վերադարձը: Վերջապէս ինչպէս մէկ չափազանցութիւնը միշտ ուրիշ չափազանցութեան մ'առիթ կուտայ, շատ քննադատներ Բապալին մէջ ուրիշ բան չեն տեսներ բայց եթէ արաբական խորհրդականութեան ստորկական նմանութիւն մը, այն այլանդակ հըռ-չակեալ խորհրդականութեան, որ, իբրեւ իմաստասիրական դրութիւն, 11րդ դարուն զարգանալ սկսաւ երբ Աղէքսանդրեան զբաւ-րոցի նէօ-պոլիսեան դադարները խլամ-արաբաց իմաստասիրական մտքին հետ չօգտիման, հաղորդակցութեան մէջ մտան, այս խառնուրդ խորհրդականութեան կատարեալ բացատրութիւնն է Իպն-Սինա՝ ընդհանրապէս Ասիկանքն անունով ճանչուած խլամ-իւր-իւրովան՝ որ իրիւրովայական ընդհանուր պատմութեան մէջ՝ իւր ժամանակի հմտութեամբն ու հեղինակութեամբն ծանօթագոյն դէմք մ'է: Այս ենթադրութեան կը հասկցուի թէ ամենէ աւելի հին հուշակուած «Բապալական» գրքերը ըստ քմաց կարկըտուած, ըստ հաճոյս դարբնուած խաբէբայական գործ մ'եղած պիտի լինին և թէ անոնցմէ ամենէ աւելի կարեւորը՝ որ Զօհր կը կոչուի 13րդ դարու Մօիզ տը Լէօն անուն սպանիացի րապպուլնի մը անմարտելի բանագործութիւնը համարուած է:

Այս զանազան կարծիքներէն առաջին երկուքը քննադատութիւն չեն վերցնել անոր համար յիշատակեցինք որ հասկցութիւնն ինչ աւելորդապաշտ դաւանութեան մ'առարկայ եղած է: Երրորդ կարծիքը որ թէ և առաջին կարգի գիտուններու կողմանէ շատ հմտութեամբ պաշտպանուած է. սակայն իրեն ընդդէմ ունի ամեն տեսակ վկայութիւններ ու իրողութիւններ: Երբ քննուի Բապալն ինքն իր մէջ, երբ այն բաղդատուի նոյնանման վարդապետութեանց հետ, և եթէ մտածուի այն անսահման ազդեցութեան վըրայ, զոր ներգործեց ոչ միայն եբրայական ազգին դրայ այլ նաև մարդկային մտքին վըրայ ընդհանրապէս, անկարելի է չհամարիլ զայն չափազանց լուրջ և կատարեալապէս ըսկզբնական, տարօրինակ դրութիւն մը:

Առանց անոր բոլորովին անկարելի է բացատրել «Միսինա» և Թալուտի բազմաթիւ բնագրերն որ կը վկայեն թէ հրէայք զոտուծոյ բնութեանը և տիեզերքին վրայ

գաղտնի վարդապետութիւն մ'ունին այն հին ժամանակաց մէջ, ուր կը հասցունեն Բապալական բամուռքը:

Բապալն իւր ծագումէն սկսեալ՝ երկու ճիւղի կը բաժնուէր, մին որ կը կոչուէր «Ծննդեան» պատմութիւնը (Մասսեհ Պէրէ-շիդ) ստեղծագործութեան խորհրդաւոր բացատրութիւն մ'էր: միւսը՝ երկնային «Կառքի Պատմութիւնը» (Մասսեհ Մէրքապալ) անունով կը կոչուէր, այսինքն այն կառքը՝ որ էգեկիէլի տեսիլքին մէջ կը յիշատակուի: Աստուածաբանութեան և Բնագիտութեան դրութիւն մ'էր. ուր աստուածային ստորագելիներու կարեւոր ընդարձակումը բոլոր էակներուն նախապատճառը ներկայացուած էր, երկուքին ալ վայելած սրբութեան և կարեւորութեան աստիճանը միեւնոյն չէր, մարդ մը կրնար մէկու մը ամբողջովին ուսուցանել Մասսեհ Պէրէշիդը. իսկ անհամար զգուշաւորութիւններով ու խիստ շատ չափաւորութեամբ ուրիշի մը կը հաղորդէին «Մասսեհ Մէրքապալ»ը: Տակաւ առ տակաւ կազմուած են այս երկու գիտութիւնք. ի սկզբան միայն բերնուց կը հաղորդէին եկամուտներուն որք զոց ընելով մտքերին կը պահէին: Փանի մը հաղուագիւտ հին ձեռագրեր էին հին պատգամներու ոճով գրուած. խորհրդաւոր կերպով ձեռքէ ձեռք կ'անցնէին հետզհետէ բազմապատկելով ծաւալը: Այսպէս շատ մը դարերու մէջ յօրինուեցան Բապալի երկու գլխաւոր և ամենէ աւելի հին յիշատակարանները. «Սէֆէրիսիւրա»-ն և «Զօհար»ը. որոցմէ առաջինը կը վերաբերի «Ծննդեան» պատմութեանը, և երկրորդը՝ Երկնային Կառքի պատմութեանը: Ուրեմն ոչ մին և ոչ միւսը միեւնոյն հեղինակի գործ չենք համարիր, և չենք սեփականեցնել ինչպէս՝ երկար ատեն և առանց հիմնաստի պատճառի մը սեփականեցին. ոչ Սեֆէրիսիւրա-ն Աբելահին և ոչ Զօհարը՝ Սիմօն Պէն «Ժօքաի»ին հեղինակութիւնն են. թէ և Սիմօն Պէն-Ժօքաիին և իւր աշակերտներն՝ շատ յայտնի կերպով կերեւի թէ՛ անոնց խմբագրութեան մէջ մեծ դեր ու մաս ունեցած են. և այս կերպով կ'անհետին միտնգտման այն գծաւորութիւնք ու թիւրիմացութիւնք՝ որք այս երկու գրքերու վաւերականութեան դէմ ելան:

Ինչպէս որ նախ և առաջ ուշագրաւ է Բապալականաց նկատմամբ և որ նոյն իսկ առ

նոնց տարօրինակութեան կամ սկզբնականութեան մասը կը կազմէ . այն ձեւն է որով կը բացատրեն ընդհանրապէս իրենց վարդապետութիւնը : Քանզի եթէ չէին համարձակեր խոստովանիլ նոյն խի իրենք իրենց , կամ կեղծելու համար այլոց իրենց բոլոր արտասովոր բացատրութիւնները , կարգալու , հասկընալու , հասկցնելու տարօրինակ կերպերը . կը ջանան կամ կը ձեւացնեն թէ Աստուածաշունչէն քաղած են այս քապալեան գրքերը . և որովհետեւ Աստուածաշունչը և ոչ մէկ կերպով չի յարմարիր անոնց մտքին , բուրովին այլօրինակ կերպեր կը գործածեն : Ո՛չ բառերուն արժէքը և ո՛չ լեզուի օրէնքն ի նկատի չառնելով ամեն տեղ բառերու բնական իմաստին կուտան այլաբանական իմաստ մը , որ , ինչպէս յայտնի է , իրենց կանխասիրական կարծիքներուն բացատրութիւնը կը լայնէն կտակարանին դէպքերն և անոր պատուիրած արարողութիւնները՝ ասոնց համար ուրիշ բան չեն բայց եթէ խորհրդաւոր նշանակներ , կամ , նոյն խի իրենց յատուկ բառերը թարգմանելով ըսելու համար , միայն յաճախ խոշոր գրեթէ մը , որոյ ներքեւ կը ծածկուին օրինաց «մարմին»ն ու «հոգի»ն : «Մարմին»ն ըսելով կը հասկնան Աստուածաշունչ գրոց բարոյական իմաստը , «հոգի»ն ըսելով կիմանան անոնց խորհրդաւոր գաղտնի իմաստը . բայց այս հոգին հասկնալու համար կայ նաև ուրիշ հոգի մը , իմաստութեան և կատարելութեան գերազանցող աստիճան մը , հազիւ կրնան հասնիլ իրատ սակաւութիւն ընտրեալք : Բաց ի Ս . Գիրքը բացատրելու , այս կերպէն , զոր փիլոն ալ կը գործածէ . և փիլոնէն առաջ թերաբեւոյն ալ գործածած են . և որ յետոյ , բոլոր զեղծմամբ մէկտեղ , անցաւ Որոգիւնէսի . քապալականք կը գործածէին նաև ուրիշ աւելի արուեստակեալ միջոցներ և հնարածոյ եղանակներ իրենց փիլիսոփայական գաղափարներն առ երեւոյթի սուրբ գրքին յարմարեցնելու համար . և այս կերպով գոյացած անսկիւղ արդիւնքովն երեւակայութիւնն աւելի շլացնելու համար : Օրինակի ալագաւ . Սուրբ Գրքին տուն մը խօսքը կազմող բառերէն ամէն մէկուն թէ առաջին և թէ վերջին գրքերը առնելով կը շինէին նոր բառ մը . որ այն խօսքին խորհրդաւոր , գաղտնի իմաստը կը յայտնէր , կամ թէ կը փոփոխէին գրքերուն տառական բուն

արժէքը . վերջինը առաջինին տեղ դնելով . «ալէֆին» տեղ «թօ» գիրը . այսինքն «ալֆա»ին տեղ «օմեղան» , կամ փոխադարձաբար այսինքն առաջինը վերջինին տեղ դնելով . կամ վերջուպէս բառերը կազմող գրքերուն տեղ կը դնէին հրէից թուական գրութեան մէջ այդ գրքերուն համապատասխանող թուանշանները , որոնցմով յետոյ կը կազմէին ամենէ աւելի տարօրինակ յօդներն : Չարչարանաց կամ ասնջանաց գործիքի մը պէս կիրականած այսօրինակ միջոցներով էր որ կը բռնադատէին Աստուածաշունչը իրենց վկայութիւն ապալու , որովհետեւ հարկ է ճշմարտութիւնը խոստովանիլ , «Քապալը» բաղմաստաւորեալ է :

Միակ էակի մը գոյութիւնը անկողմնորոշեալէս ալ և ալ ձեւերու տակ և արտագրելով իրմէն բոլորակներու անսահման շարունակութեամբ մը ո՛չ միայն տիեզերքն իր համայն պարունակութեամբն հանգերձ ալ նաև զայն ստեղծող զօրութիւնը իրեն սեփական բոլոր հանգամանքներովը . ահա վերջին բառն այդ երկու գրքերուն որոնց վրայ նախապէս խօսեցանք և որոնց ամեն մէկը զատ զատ պիտի ճանչցնենք արագ վերլուծումով մը :

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ն Ի

ԻՆՉ Է ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Ծանօթութեանց որոշ կարգի մը վըրայ հիմնեալ «ստոյգ» , բնդհանուր , իրարու մէջ կապուած և գրութիւն մը կազմող ճշմարտութեանց ամբողջութիւն մ'է գիտութիւնը :

Այլ և ալ գիտութիւնը այս հանգամանքներն ու նկարագրերն ունեցող ծանօթութեանց այլ և ալ խումբերն են .— Բուն Գիտութիւնն ընդհանրապէս մասնաւոր գիտութեանց ամբողջն է , որ կը պարփակէ որոշ ատենի մը մարդկային հմտութեան բովանդակութիւնը : Մաքերուն ժառանգական ստացուածքն է Գիտութիւնը ,

կը դասաւորենք գիտութիւնները ,

լսաւ Անտրէ-Մարի-Անպէրի (*) որ զանոնք կը խմբէ, ըսաւ իրենց առարկային: Ոմանք կը վերաբերին իրաց, այլք կը քննեն ու կը բացատրեն նոյն ինքն միաբը:

Առաջինները կը կոչուին ԱՇԽԱՐՀԱՌԱՆԱԿԱՆ (cosmologique) ԳԻՏՈՒԹԻՒՆ: Այսինքն աշխարհը գիտութիւնները երկրորդները կը կոչուին ՄՏԱՌԱՆԱԿԱՆ (noologique) այսինքն մարին գիտութիւնները:

ԱՇԽԱՐՀԱՌԱՆԱԿԱՆ գիտութիւնն երբ խումբերու կը բաժնէ Անպէր . Ա. «վերացեալ կամ ճիշդ գիտութիւններ» . — Բ. «թանձրացեալ գիտութիւններ» . — Գ. խառն գիտութիւններ:

— Վերացեալ գիտութիւններն, որք մաթեմատիքական կամ չափագիտական ալ կը կոչուին, նոյն ինքն իրեն վերա վերացնելով՝ անոնց ամենէ աւելի ընդհանուր յարաբերութեանց վրայ կը խօսին: Այն գիտութիւնն՝ որոյ նիւթն են պարապ ստորածութիւնն ու ձեւերը, կը

կոչուի ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ. այն որ կը խօսի թիւերու վրայ, կը կոչուի ԹՈՒՒՌԱՌԱՆՈՒԹԻՒՆ կամ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԻՒՆ: Պարզեալ Թուաբանութիւնը՝ որ կը կատարէ գործողութիւնը չէ թէ այս կամ այն ինչ որոշեալ թիւերուն վրայ, այլ գրեթե շնանակեալ ու է քանակութեանց վրայ, կանոնանի ԱԼՃԵՊՐԱ, երբ Ալճեպրայով կը բացատրեն ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆԸ, կը կոչուի ՎԵՐՂՈՒԹԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ (géométrie analytique): Այս գիտութիւնները վերացեալ ըսուած են որովհետեւ նոյն խօսքով թիւները չէ որ ի նկատի կառնուին, այլ միմիայն շատ ընդհանուր յարաբերութիւններ և զուտ դադափարներ ու ծանօթութիւններ. այս կերպով երկրաչափին եռանկիւնին և շրջանակը գադափարական գոյութիւն մը միայն ունին. թիւերն ու անոնց յարաբերութիւնները բոլորովին անկախ են այն իրերէն որոց կրնան գործածուիլ: «Ճիշդ» ալ կը կոչուին անոնց շատ աւելի յայտնի ճշգրտութեանն համար:

«Թանձրացեալ գիտութիւններն են անոնք՝ որք իրենց նիւթ ունին իրերուն «իրականը»: Օրինակի համար.

ՀԱՆԲԱՌԱՆՈՒԹԻՒՆԸ (minéralogie), որ կը սորուեցնէ, կը նկարագրէ, կը կը դասուորէ հանքերը.

«Երկրաբանութիւնը» որ կ'ուսուցանէ երկրային կամ հողային խաւերը:

«Բուսաբանութիւնը» որ կը սորվեցնէ բոյսերն ու տունկերը:

«Վեցանաբանութիւն» որ կը սովորեցնէ կենդանիները,

«Խառն» գիտութիւնները միանգամայն վերացեալ գիտութեանց և թանձրացեալ գիտութեանց կը վերաբերին, ինչպէս. «Աստեղագիտութիւնը» (astronomie) ամենէ առաջ պարտի դիտել առողերը, որք իրականութիւններ են. բայց չափագիտութիւն կը հաշուէ անոնց ընթացքը. «մեքենակութիւնը» կը խօսի իրական ուժերու վրայ, բայց զանոնք

(*) Անպէր (Անտրէ-Մարի) ծնած ի Լիօն, 1775. մեռած 1833 Յունիս 10. մեծ մաթեմատիկագէտ, բնագէտ և փիլիսոփայ էր. եղաւ հետզհետէ առաջին ուսուցիչ Պուրկի կեդրոնական վարժարանին, Լիօնի Լիկէոնին, Բագմարուեստեան վարժարանին և Ֆրանսիայի գոյէթին մէջ, ու յետոյ Համալսարանին ընդհանուր վերատեսուչ, — մեռաւ Մարտիլիոյ Լիկիոնին հիւանդանոցը այցելելէ վերադառնալուն տունէն. — իւր գլխաւոր աշխատանքները կը վերաբերին «խալի մաթեմատիկ»ներու. այսինքն բախտախաղերու հաշուոյն, «գիտութեանց դասաւորմանը, ելեքտրականութեան տեսական վարդապետութեանը» . — հեռագրին առաջին հնարիչն է. որքան ազնուութեամբն ու արարչութեամբն նոյնքան և հանձնարովի հոշակաւոր: Անուանի է նաեւ իւր զբօսանքներով՝ որ իւր մտածմանց հմտութեան կը համապատասխանէին: Անպէր ամեն երկիրներու և ամեն ժամանակաց գիտուններուն մէջ ամենէ աւելի տարօրինակ և ամենէ աւելի գեղեցիկ դէմքն է: — Ուշեւոր և գրագէտ ժան ժագ Անպէրը՝ «Հռոմի մէջ Հռոմէական պատմութեան» հեղինակն էր որդին է:

բողորովին չափագիտական օրինաց ենթարկեալ կը գտնէ: «Բնագիտութիւնն ու «Տարրագիտութիւն»ը նմանապէս «խառն գիտութեանց մասը կը կազմեն, կերպով մը աստեղագիտութենէն և մեքենականութենէն աւելի թանձրացեալ են. բայց հաշիւը հոն ալ տեղ ունենալուն համար, «վերացեալ» գիտութեանց կը վերաբերին:

«Մտաբանական» գիտութիւնը կուսուցանեն ընդհանրապէս միտքը, մարդըն ու Աստուածը: Ասոնք երկու գըլխաւոր խումբեր կը կազմեն: Ա. «Բարոյական Գիտութիւն» և «Բուն փիլիսոփայական գիտութիւն» ըսուածը:

Բարոյական գիտութիւններն այնուքիկ են՝ որք կուսուցանեն բարոյական մարդը, հետեւապէս միտքը, բայց միմիայն անոր արտաքին յայտարարութեանց մէջտեղէն և ոչ թէ նոյն իսկ անոր մէջ ներմուծելով: Այսպիսիքն են. «Պատմութիւն»ը, «Իրաւագիտութիւն»ը (Jurisprudence), «Լեզուագիտութիւն»ը (linguistique), «Քաղաքական տնտեսագիտութիւն»ը (économie politique):

Պատմութիւնը բարոյական գիտութիւն մ'է, ըստ այնմ զի մեզ կը ցուցնէ մարդկային հոգին ի գործի, կրքերն ի խաղու և գազափարներուն զօրութիւնը. բայց այս՝ կերելի միմիայն նիւթական իրողութեանց մէջտեղէն, որպէս են պատերազմները, յեղափոխութիւնները. գաշնադրութիւնները, և ըն:


Իրաւագիտութիւնը կը սորվեցնէ օրէնքները՝ որք կը վարեն Պետութիւնները, այսինքն կը սորվեցնէ մէկ ուղղութեամբ մը արդարութիւնն ու բարոյականութեան պայմանները, բայց չի բարձրանար մինչեւ զուտ արդարութիւնն և յատկապէս բարոյական իրաւունքը. շատանալ կը պարտի իրողութիւններով ու նախընթացներով, որ յաճախ նուազ կը համակերպին իսկաւրին, և իր ետեւէն կը քեշնէ իրողութեանց և բնագրերու բոլորովին նիւթեղէն կազմածք մը:

Լեզուագիտութեան մէջ կը փնտռեն զանազան լեզուաց ընդհանուր օրէնքներն և լեզուաց ընտանիքներն ու ցեղերը, անոնց իրարու մէջ ունեցած կապերն ու յարաբերութիւնները, որովհետեւ լեզուները մտածումը կը բացատրեն, զանոնք սորվելը նոյն իսկ մարդկային միտքը սորվել է: Բայց սակայն լեզուագէտը մարդկային միտքը միայն թէ անուղղակի կերպով, բառերու և ձեւերու մէջէն կը մթնէ, իրեն ուսման առարկայ կընէ,

Վերջապէս քաղաքական տնտեսութիւնը, աշխատութեան և հարստութեան գիտութիւնը, անհատական բարեկեցութիւնը և հասարակաց բարգաւաճութիւնը մեզ կ'ուսուցանէ. որով ամենէ աւելի բարձր բարոյական շահը կընծայէ մեզ. բայց ուրիշ կողմանէ կուսայ մեզ շաքը մը տեղեկութիւններ ճարտարագործութեան, փոխանակութեան և երկիրներու բնակչաց վրայ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔԻ կը զբաղին մասնաւորապէս նոյն ինքն մըտքովը, և են. «Հոգեբանութիւն»ը կամ Գիտութիւն հոգեոյն». «Տրամաբանութիւն» կամ «Գիտութիւն մտածման օրինաց, բարոյականը կամ գիտութիւն պարտուց. ճաշակագիտութիւնը կամ գեղեցկագիտութիւնը՝ այսինքն գիտութիւն գեղեցկին, վերջապէս բուն բնազանցութիւնը (métaphysique) ըսուածը, որուն գլխաւոր մասը կը կազմեն «Աստուածագիտութիւն (théodicée) կամ Գիտութիւն Աստուծոյ»: Ասիկա փիլիսոփայական ուսմանց ամենէն աւելի բարձրագոյնն է. ինքն է որ կը խուզարկէ բոլոր իրաց և էութեանց առաջին և վերջին պատճառները, և որովհետեւ զայնս միայն գերազոյն Բանին (raison) մէջ գտնել կը հաւատայ, կը լինի Աստուծոյ գիտութիւնը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ



Սգէնլի ժէվընս՝ սոյն գիտութեան բազմամեայ անգլիացի ուսուցիչն՝ իւր Քաղաքական Տնտեսագիտութիւն անուն մատենական յառաջարանին մէջ՝ կը գրէ. «Ամեն ոք փափաքելու է ժողովրդեան ամեն կարգի դասերուն մէջ ամեն կերպ միջոցներով ծաւալել սոյն գիտութեան սկզբունքները: Այս ճշմարտութեանց տգիտութենէն է որ յառաջ կուգան ընկերական դժբախտութեանց շատերը, գործաղուէրը, անհեռատեսութիւնը, սխալ ըմբռնումը մարդասիրութիւնը, այնքան ջանքերու վհատարներ անյաջողութիւնը:»

«Քառասուն տարիներէ աւելի է որ Օրիորդ Մարդինո (անգլիացի) յաջողեցաւ ժողովրդականացնել Քաղաքական Տնտեսագիտութեան սկզբունքներն իր զարմանալի գրուածքներով: Գրեթէ նոյն թուականին Վուադլի Արքեպիսկոպոսն այս նիւթերու ծանօթութիւնները մանուկ հասակէն սկսեալ սղայոց մտքին մէջ քանդակելու չափ տպաւորելու հարկը աւելի շեշտելով ի վեր հանեց: Եւ այս տեսութեամբ հրատարակեց իր «Դրամներու վրայ դիւրին դասեր» գործը, որ բազմաթիւ սպաղարութիւններ, բազմաթիւ ազգի թարգմանութիւններ և նա մանաւանդ ամեն ազգէ հեռեւոյններ ունեցած է, որոցմէ մին է Սգէնլի՝ որու կը հեանելինք և մենք: Վուադլի գործոց յառաջարանին մէջ սա հաստատած յիշատակելի է: Սոյն գիտութեան հաստատուն ծանօթութեան մը նախասերմունքը մատաղ հասակէն: աւանդուելու են, ինչպէս փորձառութիւնը կը ցուցնէ... Անոնք որ կուտան, կը վարեն կամ կը քաջալերեն դատաւարականութիւնը, պարտին յոյժ իբրեւ կարեւոր նկատել՝ կեանքի մէջ օգտամատոյց աւարականերու վրայ ճշգրիտ գաղափարներ կանոնաւոր տպաւորել, զի այս աւարկայից տգիտութեան մէջ և ոչ մի դաս, ամենէ աւելի ստորինէն մինչեւ ամենէ աւելի բարձրագոյնը՝ կարելի չէ որ անվտանգ մնայ:» Այս գաղափարները պաշտպանուեցան, գործադրուեցան շատ մը անգլիացի գիտուններէ և արդիւնքը արգասաւոր է այսօր. Այս խօսքերով բաւ համարենք քա-

ղաքական տնտեսագիտութեան կարեւորութիւնն ի վեր հանելու համար՝ յաջա մեր ընթերցողաց:

ԳԼՈՒԽ Ա.

Ի՞նչ է ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ. — Քաղաքական Տնտեսագիտութիւնը գիտութիւն մ'է, որ կը խօսի «Ազգաց հարստութեան վրայ», կ'որոնէ այն պատճառներն՝ որք ազգ մը ուրիշ ազգէ աւելի հարուստ եւ բարեյաջող կը հանդիսացնեն: Նպատակն է սորուցնել ինչ որ պէտք է աղքատաց թիւն ըստ կարի նուազեցնելու, եւ անոնցմէ ամեն մէկուն իր աշխատանքն՝ ընդհանրապէս՝ ազգի վճարելու համար: Ուրիշ գիտութիւններ անշուշտ կ'օգնեն մեզ նոյն նպատակաց հասնելու մասին: Մեքենականութիւնը մեզ կը ցուցնէ թէ ինչպէս կրնանք մեզ ուժ հայթաղութել. թէ՞ ինչպէս գործածելու ենք մենք այդ ուժը մեքենայից աշխատութեանը մէջ: Տարբարագիտութիւնը կուսուցանէ թէ ինչպէս կը գտնեն օգտակար նիւթերը. — Օրինակի համար, կազ հանելէն գոյացած գարշահոտ դիրտէն կամ միացորդէն ինչպէս կը շինեն ընտիր ու շքեղ ներկեր, անուշահոտութիւններ եւ իւղեր: Աստեղագիտութիւնը ովկէանոսներու նաւարկութեանն օգտակար է, երկրաբանութիւնը մեզ կ'առաջնորդէ գետնածուխ (մատէն քէօմիւրի) եւ մետաղներ խուզարկելու գործին մէջ: Մարդկային բարեկեցութեան բարդաւաճման օգտակար են նաեւ զանազան գիտութիւններ:

Իրաւագիտութիւնը կը խօսի մարդոց օրինական իրաւունքին վրայ, և այն կերպին վրայ՝ որով այդ իրաւունքը կրնայ աւելի լաւագոյն սահմանուիլ ու ապահովուիլ արդար օրէնքներով. Բժշկութիւնը կը խուզարկէ հիւանդութեան պատճառները վիճակագրութիւնը (stastique) կը հաւաքէ, կը միացնէ պետութեան կամ հասարակութեան վերաբերեալ բոլոր իրողութիւնները. Բոլոր այս գիտութիւններն աւելի առողջ, աւելի հարուստ, աւելի խմբատուն ըլլալ կը սորվեցնեն մեզ:

Բայց «Քաղաքական Տնտեսութիւնը» ամենուն մէջ նշանաւորն է: Սա կը խօսի ինքնին հարստութեան վրայ, կը հասկցնէ մեզ հարստութիւնն ինչ որ է. ինչպէս աւելի լաւագոյն կերպով սպառելու գործածելու ենք

զայն ստացած ատեն՝ ինչպէս կրնանք օգուտ քաղել մեր բոլոր գիտութիւններէն զայն վաստիկը համար:

Շատեր կը կարծեն թէ Քաղաքական Տընտեսագիտութիւնը «լոկ հարստութեան» վրայ միայն խօսելուն համար, սխալած է կրսնն: Հարստութենէն աւելի շատ ընտիր բաներ կան, ինչպէս առաքինութիւնը, սիրելութիւնը, վեհանձնութիւնը, և կուզեն որ պարզ հարըստութենէն աւելի նախաձեռնար համարէինք իրենց բաժնի բարիքներուն վրայ վարդապետել: Մարդ մը ճարպիկ առեւտուրով կրնայ հարստանալ և ագահի մը պէս թաղել իր բնակարանը: Եւ որովհետեւ քանքարաթափոյց լինելու տեղ՝ իր ստակն հազար անգամ աւելի արժէք կունենայ եթէ իր ծնողաց, իր բարեկամաց և հասարակութեան օգտին ընդհանրապէս ծախսէ՝ կան մարդեր, որք զայդ առիթ բռնելով կը պարսաւեն հարստութեանց գիտութիւնը: Այս քննադատներ կ'անդադրեն քաղաքական տնտեսութեան նըման գիտութեան մը նպատակը: Չեն հասկընար թէ մեր ուսումնասիրութեանց մէջ, բան մը միայն միատեղ կրնանք ընել: Չենք կրնար միևնոյն ատենի մէջ ընկերական բոլոր գիտութիւնները սորուեցնել: Ոչ ոք կը կշտամբէ աստղագէտը՝ աստղերուն վրայ միայն՝ կամ թռչող օդանոսները՝ լոկ թիւերու ու քանակութեանց վրայ խօսելուն համար: Շատ հետաքրքրական պիտի լինէր եթէ այսպիսի նախնական ուսումնասիրում մը խօսէր մեզ աստղագիտութեան, երկրաբանութեան, տարրաբանութեան, բնագիտութեան, բնախօսութեան ևն. ամբողջին վրայ մէկանց՝ ինչպէս կան շատ մը բնական գիտութիւններ, նոյնպէս ալ կան շատ մը բնակրական գիտութիւններ, որոցմէ ամէն մէկն զրապէս է միայն իրեն յատուկ նիւթով և ոչ առհասարակ բոլոր իրերով:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆ:

Մանկավարժութիւնը դաստիարակութեան կամ կրթութեան գիտութիւնն է: Եւրոպերէն մանկավարժին կ'ըսեն Քեդուկ որ յսնարենէ կը ծագի, բառորէն կը նշանակէ՝

ճանաչող հին հելլենք՝ մեր դպրոցի տնտերերուն նման՝ մանուկը դպրոցն առաջնորդելն լու համար կարգուած գերին կը կոչէին Քեդուկ: Արեւմտեան այս բառն իր բոլորովին նիւթական իմաստէն բարձրացած է աւետաղնի իմաստի մը, մանկավարժն է այսօր ա՛ն որ իմացականօրէն ու բարոյապէս կ'ընտելէ մանկութիւնը: Քան զայս աւելի ինչ գեղեցիկ պաշտօն: Անձնիւր ոք կը հասկնար անոր կարեւորութիւնն ու մեծութիւնն:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՅՆ ԲԱՌԻՆ
ԶԱՆԱԶԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ:

Մանկավարժութեան առարկան դաստիարակութիւնն է, բայց ինչ ըսել է դաստիարակութիւն: Այս բառն իր ընդարձակ իմաստով կը նշանակէ կենդանի էակներու զարգացումը վարելու արուեստը. պիտի ըսենք տունկերու դաստիարակութիւնը, մեղունքու, շերամներու, ընտանի կենդանիներու դաստիարակութիւնը (բուծողութիւն, տնտրողութիւն), ինչպէս կըսեն մարդուն դաստիարակութիւնը:

ԲՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ. — Դաստիարակութիւնն՝ իր աւելի բարձր եւ աւելի անձուկ իմաստովը՝ կը նշանակէ մասնաւորապէս եղանակներուն կամ միջոցներուն այն ամբողջութիւնը, որով կ'առաջնորդենք կամ կը վարենք աղան դէպ իր կատարեալ զարգացում, մշակելով ու ուղղելով իր բոլոր կարողութիւններն ու յատկութիւններն:

Դաստիարակութեան նպատակն է, կ'ըսէ Սդուարդ-Միլ, (*) խաղու մէջ դնել մարդկային էակին թաքուն ուժերն, բնութեան տարածին կամ ներածին չափ զայն հասցընելու համար իր ամենէն աւելի բարձր աս-

(*) Սդուարդ-Միլ անգղիացի փիլիսոփայ եւ տնտեսագէտ, 1806ին ծնած, 1873ին մեռած Պրանսայի մէջ, Վոդլիւզի դաւառը. ժամանակ մը Լօնտրայի երեսփոխան եղաւ, բայց աւելի իրրեւ մատենագիր եւ մտածող ծառայեց բանին եւ անձնիշխանութեան դատին: Տրամաբանութեան դրամաթիւնը, քաղաքական դրամաթիւնը, սկզբունքները. Էնտելիքանութեան եւ Երեւոյնական կառավարութեան անուն մատենագրական տեսութիւնն իր գլուխ-գործոցներն են. որ թէ Պրանսայի ժէ Անգղիոյ մէջ ունեցան իրենց մեծ արեքքիթ:

տիճանին: Մարդը կը դաստիարակեն չէ թէ միայն մանկութեան ատեն զինքն կրթելու հոգն ստանձնող անձինք, այլ այն ամենքին որք կ'ազդեն, կը ներգործեն իր վրայ, ինչպէս օրէնքները, սովորոյթքը, [կեանքին պարագայքն ու հանդիպոյք: Մարդ կալը մանկութենէն ելնելով ինքնիրենը կը շարունակէ իր դաստիարակութիւնը, եւ, իր բովանդակ կեանքի ընթացքին մէջ կրնայ առաջ աննկ իր կրթական այս գործ: Եւ արդարեւ դաստիարակութիւնը կրնայ եւ պարտի տեսել բոլոր կեանքին մէջ. զի մարդ գերազանցապէս կատարելագործելի էակ մ'է, եւ, եթէ գիտնայ մինչեւ իր ծերոյթին մէջն իսկ ինքզինքն այնպէս պահել պաշտպանել սովորամոլութեան ժառանգական ունակութեանց, աւանդական վարժութեանց դէմ. պիտի գտնէ միշտ բան մը աւելի իր բնութիւնն ուղղելու, մեծցնելու եւ կատարելագործելու համար:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ. — Երեք տեսակ դաստիարակութիւն կայ. Ա. բնական կամ մարմնայ դաստիարակութիւն, Բ. էմպայական կամ մտքի դաստիարակութիւն, Բարոյական կամ սրտի ու բնաւորութեան դաստիարակութիւն:

Կրնանք սոյն բաժանման վրայ յաւելուլ նաեւ «բնագոյն» դաստիարակութիւնը, որով մէկը կամ ամեն ոք կ'աշակերտի, կը նախապատրաստուի արհեստին, արուեստին, ճարտարագործութեան, պաշտօնի մը, որով պիտի բանի դատի կեանքին մէջ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱՐԵՆՈՐԹԻՒՆԸ. — Դաստիարակութեան կարեւորութիւնը կը բզիսի նոյն իսկ իր առարկայէն: Նպատակն է մարդոց երջանկութիւնը. որքան «եւն» երջանկութիւնը նոյնքան ալ անհատին երջանկութիւնը:

Եւ երջանկութիւն ըսելը զեռ չենք բաւականանար, զի երջանկութիւնը չէ կեանքին միակ, ոչ ալ գերազույն վախճանը, ունի ուրիշ նպատակ մ'ալ եւ աւելի ազնիւ: Բարոյական արժանիքը, պատուաբոլութիւնը, առաքինութիւնը, ահա առարկան զոր ամեն բանէ առաջ կ'էտ նպատակին ունենալու է դաստիարակութիւնը. յետոյ յաւելուած կուգայ երջանկութիւնը:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՀՈԴԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻԱՆ ՀԵՏ. — Ո՞րք են այժմ Ման-

կավարժութեան վերաբերութիւնքն Հոգեբանութեան եւ Բարոյագիտութեան հետ: Այս գիտութիւնքն ի՞նչ օգտակարութիւն կամ ծառայութիւն կրնան մատուցանել դաստիարակութեան:

Բարոյագիտութեան առ դաստիարակութիւն մատուցած ծառայութիւնքն այնքան յայտնի, ակներեւ են. որ այս կէտին վրայ պնդելն անօգուտ է: Ի՞նչպէս կրնանք ըմբռնել Դոգմաբանութեան առանց Բարոյագիտութեան, որովհետեւ այս գիտութիւնն է որ կ'որոշէ, կը սահմանէ հասնելիք նպատակը, կատարելագործութեան իտէալն՝ առ որ տղան առաջնորդելուն մէջ կը կայանայ գործը:

Ոչ ինչ նուազ օգտաւէտ են նաեւ հոգեբանութիւնէն սպասուելիք ծառայութիւնքը: Ոյժ մը վարելու տալովն պայմանն է զայն ճանաչելու: Հոգեբանութեանը զմեզ ճանաչելը մեզ ուսուցանելով՝ զմեզ վարելը մեզ ուսուցանելու պիտի ծառայէ. եւ մեզ ճանաչել տալով տղան, մեզ պիտի սարուեցնէ՝ առաջնորդել նմա:

Հոգեբանութեանը կ'ուսուցանէ, օրինակի աղաքաւ, մեր զգացումներն, անոնց պատճառներն ու անոնց արդիւնքները. մեր կրքերուն ծագումն. կազմաւորութիւնն ու ընթացքը. այն ամեն բաները՝ զորս դաստիարակութիւնը պարտի կամ բարգաւաճել, զարգացնել, կամ զուլել, կամ ուղղել. ճանաչել ուրեմն:

Նոյնպէս է նաեւ նկատմամբ մեր խնացական կարողութեանց, որոց մշակւմն կ'ընենք առարկան է, դաստիարակութեան այնքան կարեւոր այս մասն: Տրամաբանութեանը՝ Հոգեբանութեանը անբաժանելի՝ օգտաւէտ է մասնաւորապէս մտքին ուղղութեանն համար, զի՝ ճմարտութիւնն որոնելուն ու զայն ապացուցանելուն մէջ՝ մտքին խորհրդածեալ աշխատանքն ուսումնասիրելն ունի իրեն առարկայ, եւ, որոնելէն, որոնել տալէն, ապացուցանելէն զատ ուրիշ ի՞նչ կ'ընեն կ'ընենք մէջ:

Այսու հանգերձ Դոգմաբանութեանը կը շինէ միտքը, մտամարդ մ'է. գերազանց կարգապահում մը, զոր ամեն լուսաւորեալ դաստիարակ պիտի գնահատէ, ի բոլոր սրտէ աւելի ուշ դնելով խնացականութիւնը ձեւելուն ու զօրացնելուն քան թէ զայն խառն խառն հաւաքած՝ անմարսելի ծանօթութիւններով ծանրաբեռնել:

Ի մի բան՝ Հոգեբանությանը, Տրամաբանությանը ու Բարոյագիտությանը դաստիարակութեան կը մատակարարեն կանոններ. զորս անտեսելու չէ դաստիարակութիւնը:

Ի՞նչ ԻՄԱՍՏՈՎ ԱՐՈՒԵՍՏ Մ'է ՄԱՆ-ԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ:— Բայց պիտի ըսուի թէ մանկավարժութիւնն որքան արուեստ մ'է նոյնքան եւ գիտութիւն մ'է. արդ արուեստն ինքնիրեն կը սորվելի՞ր, ինչպէս ճարտասան լինելու համար բաւական է ունենալ յստակ գաղափարներ եւ խանդոտ կիրք մը. նոյնպէս ալ կարելի է պէտք չըլլայ տղան կառավարելու համար այնքան ուսումի. բնատուր վարպետութեան (պոէզի) եւ գորովասիրութեան գործ մ'է. եւ մայրը՝ իր սրտէն զատ ուրիշ առաջնորդ մը չունենալով՝ տակաւին լաւագոյն դաստիարակուհին է:

Ճիշդը խօսելով՝ դաստիարակութիւնն աւելի արուեստ մ'է. ամեն բանէ առաջ կը պահանջէ ներշնչումը, որ սրտէն կը բլխի, բնատուր վարպետութիւնը՝ զոր չի սորվելիր: Ոչ մի ուսում կարող չէ բռնել հիմնական այս երկու յատկութեանց անդին. բայց երբ մէկն ունի յատկութիւնք, աղէկ չէ՞ որ զայնս զարգացնէ ուսմամբ ու խորհրդածմամբ: Ի ծնէ ճարտասանը չի կորուսաներ իր բնատուր ձրիքը. երբ հոգեւորութեան (ճարտասան լինելու կանոնագիտութեան) գիտուն միջոցներն ու շնորհքներն յաւելու իր բնածին ձրից վրայ:

Եթէ երբեմն կրնան մարդիկ կանոններուն գիտութիւնը զանցառել, այն ալ՝ ճշմարտօրէն կրնան ընել միայն գերբնատուր ճարտարամտութեան մը, այնպիսի գերազույն արուեստի մը շնորհիւ, տեսակ մը ինքնագիւտ յայտնութեան պէս, կուտայ գուշակել կանոններն ու անոնց հետեւիլ. եւ այս ալ հանճարին մենաշնորհն է: Այսօրինակ իմն է որ ամենէ աւելի անմշակ մայրն իսկ երբեմն կուենայ տեսակ մ'հանճար, որ սրտէն կը բլխի. գուշակողութիւն մը՝ որով կը խելամտի իրազեկ լինել այն ամեն բանի որ կը պատշաճի, կը պատկանի մանկան. բնագոյն ծանօթութիւն մ'անոր պէտքերուն ու անոր հոգեկան կարողութեանց: Բայց չի տարակուսինք թէ այս ճարպիկ ու ճարտար մտացիութեան կամ բարակամտութեան վրայ իսկ ուսմունքն ու ուսումնասիրմունք կրնան բան մ'աւելի յաւելուլ: Ապա՝ մարդուն միշտ աղէկ է լաւ հասկնալ ինչ որ կ'ընէ. միշտ աղէկ՝ բան մը

աւելի եւ լաւ գիտնալ: Բնագոյնն որքան ալ ընտիր առաջնորդ մը լինել կարենայ՝ բանով (խելքով) վարուիլն աւելի արժանաւոր է մարդուն:

* * *

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ, ՎԱՐԴԱ-ՊԵՏԱԿԱՆԻՆ (ՏԵՍԱԿԱՆԻՆ) ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ:

Տեսականը իրերուն իմաստասիրօրէն հետաքննին ու խուզարկու ծանօթութիւնն է:

Գործնականը կը կայանայ էապէս գործողութեան, ազդեցութեան մէջ: Որդ գործնականը միշտ իրականօրէն ծանօթութեան մը կիրարկումն է:

Ամեն բանի մէջ՝ մեր կարողանալը չափը մեր գիտնալն առաջնան է. Անգղիացի փիլիսոփայ Պապոնը(*) շատ ճշմարտօրէն ըսաւ. «մարդ գիտցածէն համեմատութեամբ կրնայ բան մ'ընել. մարդը՝ բնութեան պաշտօնեան ու թարգման՝ որքան աւելի ծանաչէ ու հասկնայ այնքան աւելի կ'աճեցնէ, կը տարածէ իրաց վրայ իւր գործութիւն: Արդարեւ մեր գիտնական, հմտական ծանօթութիւններէն կախուած ունի մեր գործունէութիւն: Այս է որ աւելի լաւ կը բացատրէ այն բանաճեւ, զոր ժամանակակից փիլիսոփայական գալոց մը՝ իրրեւ գիտութեան նշանաբանն ընտրած է, գիտնալն առաջնան է. եւ կանխապէս համար:

Ամեն կարգի գործունէութեան համար՝

(*) Յիւստուա Պապոն անգղիացի հռչակաւոր փիլիսոփայ մ'է, (1560-1620). տասնեւվեց դարու գիտական վերածնութեան վկայ: Գիտուն մը չեղաւ, բայց վերանորոգեց գիտութեանց փիլիսոփայութիւնը եւ մանաւանդ Կրիստոսոստոմոսի, արդի գիտութեան համաձայն: Արիստոտելի պէս ճշգրտէն բանավարելու, իմաստասիրելու կանոններն աւանդեց. Պապոն փորձեց փորձառութեան կանոններն ալ, Լատիններէն գրեց աւելի ճոխ ու փայլուն բայց ոչ այնքան մաքուր լեզուով: Քաղաքական կեանքին շատ խառնուելով անարատ համբաւ մը չունեցաւ. զիջաւ կաշառակրծութեան որ իւր իմաստասիրական անունին ու հանգամանքին անհամաձայն էր: Անգղիերէն գրած էր քիչեր աշխոյժ ու թափանցող ոգւով գրուած են:

չատ դիւրին է այս առածին ճշմարտութիւնն ապացուցանել: Մարդու մը գործնական ճարտարութիւնը այնքան աւելի կը լինի որքան աւելի է իւր դիտութիւն, կամ երկրագործի, բժշկի: Երկրագործի փորձառութիւնը: Ասոր համար է որ տեսականին կարեւորութիւնն հարկաւոր կը լինի. նոյն իսկ եթէ անմիջապէս գործնական արդիւնք չարտագրէ: Այս առածին ոգւովն է որ Գլոսիոնար(**) ուրիշ ո եւ է գիտնական անձէ աւելի հասկցաւ տեսականին կարեւորութիւնը եւ նուիրեց ինքզինքը մասնաւորապէս հիմնելու ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ, որով ուրիշ ո եւ է գիտնականէ աւելի նպատակը գործնական մարդուն կարողութիւնը հիւանդութեան դէմ:

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

ՀԱՆՃԱՐՆԵՐԸ

Մարդկութիւնը մէն մի օր կը ձեւավորւի իւր գաղափարներն և իւր զարգացման եղանակները, կը վերանորոգէ ու կը վերադարձէ իւր գործիները: Ի բաց թողլով ընդհանրա-

(**) Գլոսիոնար ֆրանսացի նշանաւոր բնախօս մ'է, 1878ին փարիզի մէջ մեռած. Պոթօլի բնիկներէն. Երեսօրիսանաց ժողովը, յԱնձին անոր պատուելու համար՝ ֆրանսական գիտութեան ամենէ աւելի մեծ վարպետներէն մին՝ կամեցաւ որ անոր յուղարկաւորութեան ծախքը կառավարութեան վրէժարուի: Որքան իր կեանքին պարզութեամբն եւ իւր բնաւորութեան ամբողջութեամբն մեծ էր՝ նոյնքան եւ բոլոր աշխարհի ծանօթ իր գիւտերովը նշանաւոր է, իւր չքեղ ու պայծառ ոճը զինքը ֆրանսական Ակադէմիան անդամակցութեան արժանացուց: Ֆրանսական Գիտութեանց Ակադէմիան փառքերէն մին հանդիսացաւ երկար ատեն, իր հեղինակութեանց ամենէ նշանաւորն է Փոլսոնար Բժշկութեան Ներառման անուն գործը, ուսումնասիրեց աւելի ձկները. գտաւ լեարդին պաշտօնները, հնարեց շատ մը փորձեր՝ որով ինքը բնախօսութեան մէջ ճշմարտապէս արարչական հեղինակներէն մին կը համարուի:

կան երազն և երեւակայութեան ցնորքը՝ որք առաջին հինգ կամ վեց դարուց կրկնեւերթը՝ այսինքն պատրանքեւ եղան. վերջապէս կը խոկայ ճանաչել իւր բնականը և ճանաչել ինքզինքը. վստահի, փառալայ գեղեցիկ խօսքին հա եմատ, «Այնչափ դարեւրանութեան մէջ մարդոց շարունակութիւնը նկատելու է իրեն նոյն մի մարդը, որ գոյութիւն կունենայ միշտ, որ կուսանի շարունակաբար:

Փառք այն գիտուններուն, բոլոր այն մարդոց, որոց գերազանց մէթոսները, գիտները գործնական ջանքերը մարդկային սեռին դաստիարակութիւնն յօրինեցին, բացին նմա փրկութեան ուղին, խլեցին զայն խաբուսիկ երազներէն, դիցաբանական բացատրութիւններէն, առասպելական հաւատալիքներէն և թշուառ կեանքէն, նմա տալու համար իրական ուժեր, գործիներ և ստոյգ նպատակ մը:

Փառք կոպէնիկի, Կալվինի, Գէլլիի՝ որք երկիրը դարձուցին. փառք Նէվտօնի, Լապլասայ, Հերշլի՝ որք երկինքը բացին մարդկային աչքին. շնորհակալքք Մոնիոլ-Ֆիլի, Փիլատր տը Ռոզիէի՝ որք տիեզերքն օդին. Ֆրանգլիին և Տալիի՝ որք մեզ ապահովեցին շանթէն ու ածխակալէն (grisois). Սալուստի տը Գոի, Փալէնի, Վուադի՝ որք մեզ օժտեցին չոգիին թեւերովն և ձուկին լողարաններովը: Գոհունակալքք Կիւպէնպէր-կի՝ որ հաստատուն գործեց մտածումը և քաղաքակրթութեան միջոցները բազմապատկեց. Գրիստափոր Գոլմպոսին՝ որ աշխարհը մեծցուց, ընդարձակեց, Ֆլալիօ Ճիւուարն և Մարգօ Փոլօին՝ որք կողմնացոյցը գտան եւ ապահովեցին նաւարկութիւնը. Կալվանիին՝ որ ելեքտրականութիւնը գտաւ. Վոլթիֆոնի եւ Մորսի՝ որ ելեքտրական հեռագրով փայլակի արագութեամբ ուղեւորել տուին մարդկային խօսքը, մէկ խօսքով՝ շնորհակալքք գիտութեան, արուեստից եւ ճարտարագործութեան բոլոր հանճարներուն՝ որք մեր սեռն իր ազիտութիւններէն եւ իւր տկարութիւններէն ազատագրեցին նմա յայտնելով իր ուժը, ազատագրելով իր հոգեկան կարողութիւնները, նմա տալով լոյսը, զօրութիւնը եւ բարեկեցութիւնը: Ահաւասիկ մեր ճշմարտ ազնուական դասը, նախնիքներն՝ որոց տիաղաները պարտինք ստրուկ,

դիւպլոմաթիկները նկարագրել եւ ծանոթագրել Գիւտերը :

Առանց անոնց՝ չի պիտի ճանչնանք բընութիւնը . պիտի ապրէինք ու բռնակէինք անբաններու պէս :

Առանց Պագոնի, Տէգարդի, Սրինօլա եւ Գօնտիլլագի չի պիտի կարողանայինք բանալարել, խմաստաւորել . առանց Ռոմէ Պագոնի եւ Ջաքարիա Ժանոէնի, հեռագրութիւնն ու մանրագիտակին այս երկու հնարչաց, մենք չի պիտի տեսնէինք ո՛չ մեծ ո՛չ փոքր իրերը, ո՛չ աստղերը, ո՛չ անհունապի փոքրերը . առանց Փասիֆիգոս տը Վէի ոռնի եւ Փիէր Հէլի՝ տակաւին աւապի ժամացուցով պիտի գոհանայինք եւ ճշգիւ չն պիտի դիտանայինք մեր ժամերը . առանց Դորիշէլլի եւ Տրէպպէլի՝ ո՛չ օդին ծանրաչափական նախատեսութիւնները, ո՛չ բարեխառնութեան փոփոխութիւններուն նախագուշակումները չի պիտի ունենայինք . առանց Կիւյ ա՛Սրեցցօի՝ ներդաշնակութիւնը բեր մէջ չի պիտի տրէր . Սռանց Փարմանդիէի՝ մենք գեսնախնձոր լիազատէս չի պիտի ուտէինք . առանց Տաքթոր Ճէննըրի՝ ծախսախառն պիտաւորած պիտի մընայինք, առանց Ժաքուառի եւ Ֆիլիպ տը Ժիրարտի՝ շատ գէշ եւ շատ սուղ պիտի հագուէինք . վերջապէս՝ առանց Կիյօդիէի՝ գեղարանին մէջ կամ կախաղանին վրայ, Կիյօդիէին անուշութիւնները չի պիտի ճանչնայինք :

Օլիւիէ տը Սէրրին եւ Մաթիէօ տը Տոմպալի կը պարտինք մեր երկրագործութեան զարգացումները . Ժիւսիէի, Լիննէի եւ Դուրնըֆորի կը պարտինք լուսաբանութեան գասաւորութիւնը, Պիւֆոնի եւ Հիւմպոլտի կը պարտինք բնական պատմութեան փառաւորութիւնները եւ Գալլէն (աշխարհքին) կամ տիեզերքին գիտութիւնը . Կոպերնիկին, Կալիլէին, Բէրլէրին, Ֆոնդընէլին, Լաբլաիին, Հերշէլին ալ աշխարհքին գիտութիւնը . Վիէգի՝ ալճէպրան երկրաշտփութեան գործածելը . Փրիսթլի, Շելի, Լաւուազիէի՝ տարրագիտութեան (chimie) հիմնադրութիւնը . երկրաբանութեան յառաջգիտութիւնը՝ Գիւլիէի եւ Տօպէնդոնի . բնախօսութեան (physiologie) զարգացումը՝ Ժէֆրուա Սէն-Դիուէրի . մաթեմատիկական գիտութեան զարգացումը՝ Սեյմուրի, Արքիմէտի, Նէվ-

տոնի : Լայպնիցի, Փասղալի, Լակրանժի . մետաղներ բանալու արհեստը՝ Թոփալկոյէնի, սյգին՝ Նայի, բժշկական արհեստը՝ Էսգրիւապի, Հիպոկրատի, Կալիէնի, Վէգալի, Սմարուադ Փարէի, Հարվէի . արօրը . Տըրիպտոյէմի . իւղաներկը՝ Ժան Վանէյքի, Վոլդայեան ձողը՝ Վոլդաին . սեւ կամ մթին խուցը՝ Փոդաին . լուսանկարչութիւնը՝ Դալպին, Նիէլսին եւ Տոկէրին . կալուանաձու (ու մը՝ Ժագօպիին . դիտակը՝ Սրինա տը Փիզալի . Կինկէտը՝ (կանթեղ) Քինգէի . փուքը՝ (քէօրիւք)՝ Շէլլանի շաղկապները (manometre) Մարիօդի : ձեռքի կառքը (bronzettes) Փասգալի . նշանակներու (logarithme) հնարումը՝ Պառն Նէրրի . Արամազդայ արքանեակներուն տեսական վարդապետութիւնը՝ Գասինիին . լճեագրական երկրաչափութիւնը (géométrie descriptive)՝ Մոնժի . մարմնոց կշռականութիւնը (statique des corps)՝ Պէրդուէի . տարրագիտական զանգակները (կաղերը հաւքեցու բիւրեղեայ անօթ)՝ Փոլէն տը Գամբանի . գաճով կաղապարելը՝ Անտրէ Վերոֆի . խոռոչաւոր եւ գրոցով (burin) փորագրութիւնը՝ Պէլ-Գիւրնիօի եւ Ֆինիէրրաի . Րօմէ Պագոնին եւ Պէրթալտ Շուարձին՝ (կրօղը տանի երկուքն ալ) վառօդը . կատարեւագործեալ արօրը՝ Տոմպալի՝ Րօզի եւ Կրանժի, հաշուեմեքենան կամ բազմապատկութեան աղիւսակը՝ Պիւթաքորայ, կիտուածանկար (մինէլի) պատկերահանութիւնը՝ Պէրնար Փալիսի . անագազօծման (գալալանմագ) եղանակները՝ Սօրէլի . անվերջ պտուտակը՝ Արքիմէտի . վիմագրութիւնը՝ Սընեֆելտէրի . ջրհանը՝ Փերսնէի . «Լէֆֆֆ»-ը՝ Արնօ տը Վիլնէօվի . ճակնդեղի-աքարը՝ Մարկրաֆի . ծխախոտը՝ Նիգօդի . առաձգական խէժը (կոմէլասաիդ)՝ Ֆրէսնօի լլ . Լա Գօնտալինի . ձկնաբուծութիւնը՝ (pisciculture)՝ Կոմս տը Ժիրոլդէնի . շարժումաձեւերով ռուտցումը՝ Փիէր տը Փոնսի եւ արքայ տը Լիւիէի . մեքենական մանողութիւնը՝ (էլիքմէ սէնտաթը)՝ Սամուէլ Գրօնդօնի . լուսաւորութեան կաղը՝ ճարտարապետ Լըպօնին . թուղթ շինելու մեքենան՝ Լուի Բօպերդին . սուղազանգակը՝ (cloche a plonger)՝ Ամերիկացի Ֆիլիպպին . փապուզին (թիւնէլը)՝ ճարտարապետ Ֆրոնսաեցի Պիւնէլին . փարոսները՝ բնագէտ Ֆրէսնէլի . ալիւմինի (ճերմակ, թեթեւ, արծա-

(Թափայլ մետաղ)՝ Տըվիլի. քլորոֆորմը՝ Սուպիրանի. կարի մեքենան՝ Թիմոնիէի. խնայողական լապտերը՝ Սելլիէի եւ Տէշանրի. դրամահատութեան մամուլը՝ Նիգուա Պրոպէի. ինքնաշարժ մեքենաները՝ Վուանոնի. կառքերը՝ Ֆիլիպ Շիէզի, օդահան մեքենան՝ Օդոֆո Կերիքի. կաղնիի կեղեւի փուշով մորթերը պատրաստելու արհեստի կատարելագործումը՝ Բուէնի. Ժամանակաչափը (chronometre)՝ Կրահամի. հրէջ ջրհանը՝ Ֆիշէրի. ջրաբաշխական մեքենան՝ Մօնկուֆիէի. կտաւները մաքրելու արհեստը՝ Պէրթօլէի. Թորանոցը (alambic)՝ Էդուարդ Աստուրի. ալգօլաչափը (alcoomètre)՝ Կէյ-Լիւսագի, երկաթաթեղ կամուրջները՝ Պ. Լըի. բարակ կտաւը (փաթիւթա)՝ Պադիսի Շամպրէի. անագեալ հայելիները՝ Պէգմանի. օդադրական աղիւսակները՝ (éphémérides) Մոնդերմի. — Ժապուարի պարտական ենք կրտաւ բանելու, գործելու արհեստը. Ֆիլիպ տը Ժիրարտի՝ փուշը մանելու եւ ներկելու, խծուծները (իւսթիւփիւ) գտնելու, Ժապուալները եւ մանելու մեքենաները, ուժաչափը (dynonometre, Ժամաշերմաչափը (chronotermometre), մէտէօրանկարը (météorographe). գնտածեւ մարմինները դարձնելու եւ հարկեր ձիերու ու ժով օդով ուռած մեքենաները. քաղելու եւ քաղածը մանրելու մեքենաները՝ Պ. Պ. Փէգիէի, Մագիէի եւ Լըթանտի. հնծածը չորցնելու մեքենաները՝ Պ. Սմիթի, հունձքը ծեծելու մեքենաները Պ Պ. Փինէի. Ժիրարտի եւ Գիւմէնի:

Կանկ կառնենք այլեւս. զի մարդկութեան բարերարաց ցանկը անվերջանալի է:

Ժողովրդավան ԴԱՍԵՐ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Մ Ո Ւ Տ Ք

Սորուցնել ուզել ժողովրդին — այսինքն կրթութեան անժառանգներուն, մեր եղբայրներէն անոնց՝ զոր ծննդեան դիպումածը զրկած է գիտութեան հասարակաց գանձէն. — թէ ի՞նչ է փիլիսոփայութիւնը. բացատրել գիտութեանց գիտութիւնն անոնց, որք հազիւ գիտեն թէ գիտութիւնք կան, անկարելի աշխատանքի մը ձեռնարկել չէ՞:

մի: Եւ սակայն՝ եթէ ճշմարիտ է որ փիլիսոփայութիւնն իմաստութիւնը ըսել է. ի՞նչ իրաւամբք մէկ քանի առանձնաշնորհեալներու մենավաճառն ընենք զայն:

Հին առեն՝ իմաստունները, նախնիքը՝ որ ժողովրդոց հովիւներն էին. սրբավայրերու խորը դաղտուկ կը պահէին, ամեն աչքէ ծածկելու համար, այս իմաստութիւնը, որ իրենց իշխանութեան աւանդն ու աղբիւրն էր: Ժողովուրդք այսօր չեն կամիր իբրեւ երամակ դարձածուիլ: Իրենց միտքը իրենց ձեռքովը մշակելու, վարելու կարող կղզան: Պէտք է ուրեմն որ տաճարին վարագոյրերը պատուովն եւ ժողովուրդք կարենան դիտել դէմ առ դէմ այս իմացական արեւը, որ այսօր հետէ միայնակն առաջնորդելու է իրենց քայլերը: Եթէ կան ճշմարտութիւններ՝ զորս տղայոց հասկցնելն աղէկ չէ, չափահասներն իմաստուն ընելու համար դիտնական ճշմարտութիւնները վնասակար չեն:

Ժողովուրդներն այլեւս տղայ չեն. հերիք առատպնդնելու եւ քրմական սնապաշտ խորհուրդներու կաթովը սնան, ասլոցան. աւելի հիւթաւոր, աւելի կազդուրիչ սնունդի մը պէտք ունին: Իմաստութիւնն ուսուցանելու համար բան մը ծածկելու չէ: Ամենէ աւելի վսեմ ճշմարտութիւններն որպէս ամենէ աւելի պարզ ուսմական ծանօթութիւնները հասարակաց հասկնալի ընելու է, որովհետեւ մօտ է այն վայրկեանն՝ ուր մարդ անունին արժանի չի պիտի համարուի մէկը՝ որ անծանօթ միայ մարդկեղէն բանի մը. մինչեւ աստիճան մը չը գիտնայ բոլորն ինչ որ մարդկային հանձարն հնարած, գտած է:

Պշտունն ու Արիստոտէլն էին, Պապոնն ու Լայպնիցն էին որ ըրին մեզ ինչ որ ենք. սցախքն մարդկութիւնն այսօր անոնց կը պարտի ունեցած իմաստութիւնը: Փիլիսոփայութիւնն է որ տէրերէն ու ստրուկներէն քաղաքացիներ չինեց: Ան է որ ցրուեց աշխարհքը պատու, պաշարող խաւարք. բացաւ մարդոց միտքը. մեկնեց լուսարանեց ամէն ինչ որ խրթին հանելուկ էր, ջնջեց մտքի չղթայ նախապաշարումները. ժողովուրդներն ու ցեղերն իրարմէ զատող մաքի սյդ չինական պարիսպները քակեց. քրքրեց: Նախախնամութեան պէս՝ ընդմիջտ մարդկութիւնը վարեց եւ պիտի վարէ, մինչեւ լիովին ու ամբողջովին բաշխէ իւր լարիքն եւ անկարօտ

ու ամենակարող ընէ մարդկութեան հայրե-
նիքին հանուր զաւակները: Եւ ան որ մեզ
վարեց, պէտք չէ որ մեզ անծանօթ մնայ:

Գործաւորք, մշակն, մարդկային միաբեր
զերծագրող իմաստութիւնը ճանչնալ ջանանք
եւ յարգենք անոր թարգմանները: Երբ անց-
նինք Ս. Մեսրոպայ, Ս. Սահակայ եւ այլ
ոսկերերան թարգմանչաց, մատենագրաց տա-
ճարներուն, շիրիմներուն կա՛մ տնոնց յիշա-
տակներուն առջեւէն, ողջունենք ու ծնրա-
գրենք. զի նաքա սուին մեզ իմաստութեան
նախասերմունքը եւ յորինեցին մեր լեզուն:
Օտարագրի թէ մերագրի մեծ իմաստնոց չա-
տերն որպէս Տէգարդ, Ասիլարտ, Տանթէ
թէ եւ յաճախ արտալած վտարեցան. սակայն
իրենց տարագրանաց մէջէն աւելի դժգոհեցին
աշխարհքը եւ աւելի լուսաւորեցին միտքերը,
որոց բուն ծնողքն են:

Իմաստուններն են մեր ճշմարիտ հայրերը,
որք կեանքէն աւելի մեծարժէք լոյսը տուին
մեզ:


Անոնց պատմութիւնը պիտի գրեմ ձեզ,
բայց աղէկ մօտիկ ըրէք. մեծ մոքի տէրեր ի-
րենց մտածմանց մէջն է որ կը բովանդակի ա-
նոնց պատմութիւնը: Եւ այս մտածումները
միմիայն իրենցը չեն, անոնք հարկաւոր ար-
դիւնք ու կարեւոր արգասիքն էին այն ի-
մացական բարգաւաճման. որուն հասած էր
մարդկային սեւն իրենց ապրած թուականին.
վասն զի ոչ ոք իր գործին բացարձակ հեղի-
նակն է. զի ամէն մարդ կը մասնակցի. կա-
ջակցի ամեն մէկուն աշխատանքին:

Երբ դուք կը հերկէք դաշտ մը. արօրն
հնարօղը, խոփը շինողը, անոր փայտը ձե-
ւողը ձեզ հետ միատեղ կը հերկեն. երբ
դուք կը շինէք կահ մը, կարասի մը, այդ
գործին մէկ մասը պարտական չէ՞ք այն նա-
ւաստեաց. որք դնացին ուրիշ կլիմաներու
տակ, փնտուել ձեր կտրած, բանած ընտիր
փայտերը, ուրիշ մաս մը՝ այն աստղծա-
գործներուն, որք կաւուցին անոնց նաւերը,
ուրիշը՝ այն անթիւ աշխատաւորաց՝ որք
պատրաստեցին ապրուստն ու հագուստը,
այն գիտուններուն՝ որք գծեցին աշխար-
հացոյցը եւ հնարեցին այն գործիներն ա-
ռանց որոց, նաւապը պիտի թափառէին մո-
լորաքայլ եւ ըստ բախտի: Ամենեքին զիրար
կը բռնեն. ամենիքին իրարու հետ կապ-
ուած են շղթային օղակոց պէս: Պատմելով
ձեզ այն մարդոց մտածումները՝ որք ամէն

մէկ գարու հմտութեանց, ծանօթութեանց
գումարն աւելի բազմապատկեցին: Ուրեմն
մարդկային մտքին պատմութիւնն է զոր
պիտի ընեմ:

Բայց մի պակնուք փիլիսոփայութեան ա-
նունէն. որմէ վախճուցած են ձեզ. այնքան
դժուար ու անմարտելի բաներ չեն. երբ
չարունակէք ձեր ընթերցումը պիտի գար-
մանաք թէ դուք ալ ինքզինքնիդ. յանգէտս
ձեր, փիլիսոփաներ պիտի գտնէք: Որովհե-
տեւ պիտի տեսնէք թէ այն խնդիրները՝ զորս
կը յուզէ փիլիսոփայութիւնը, հիմնովին նոյն
խնդիրներն են՝ որոց վրայ՝ ամեն օր՝ ձեր աշ-
խատանոցներուն եւ ընտանեկան զրուցա-
տրութեանց մէջ, խօսքի նիւթ կ'ընէք: Ան-
վհատ շարունակեցէք ընթերցումը: Հետեւե-
ցէք Ռասպէի խորհուրդին՝ որ կ'ըսէր. «տո-
կուն ակումներ ունիք. ձեզ տրուած ոսկորը
կտրեցէք ծուծը ծծելու համար»: Աւելի
ուզնածուծն է եւ փիլիսոփայական ուսումը.
ով որ տակէ ուտէ անպարտելի կը լինի: Ուս-
նինք Փիլիսոփայութիւնը:

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ



ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՈՒՄԸ

Ազգային եւ միջազգային թերթերու
հետ եւ մեր անդրանիկ «Հանրագի-
տակ»ը ի խորոց սրտի կը շնորհակալէ
զնորին Կայսերական Վեհափառութիւն
Մեծն Ղազի Սուլթան Համիտ Բ. եւ
իւր ժողովրդապաշտպան նախարարու-
թեան: որ ընդհանուր ներումն շնորհ-
ուած է Հայ բանտարկեւոր բարձրագոյն
հաճութեամբն,

Նմանապէս՝ ի դիմաց՝ Ազգին կը մա-
տուցանեմք մեր գոհունակալութիւնն
նորին Կայսերական Վեհափառութեան.
որ բարեհաճած է իմանալ թէ Մայրա-
քաղաքին ու Նահանգաց մէջ հայ սրբեր
եւ այրիներ կան, բարեհաճեր է իւր հայ-
րախնամ կողմաւարութեան միջոցաւ ա-
նոնց ամեն կարգի կարօտոյքն ու պի-
տոյքը հոգալ ու հայթայթել:

Վերջերս գումարեցաւ Ազգային Երեսփոխանութիւնը, Ում առաջին անգամ նախագահելու պատիւն ունեցաւ Պօլսոյ առաջին Պատրիարքն ընծայող Պրուսա Գաւառին 28 ամերէ անընդհատ առաջնորդ Տ. Տ. Բարթողիմէոս Չամչեան կամ Ռուբէնեան, Բարձրաշնորհն այն Տեղապահ, Որ ստանձնեց զիւր պաշտօն ընտրելու համար միայն Ազգին ու Տէրութեան համարմանն ու համակրանացն արժանի հաւատարիմ Պատրիարք մը, եւ ատենապետեց նմա Վսեմ. Ստեփան Փաշա Ասլանեան, Ազգային Դիւանագիտական պատմութեան ընդ միշտ հիւնարի Դէմքերէն մին. Ատենագալիւր ունենալով իրեն Ազգ. Երեսփոխանաց կրտսերագոյնը, Հայկական կրթարանի տընօրէնը, ոսկեղէն ճաշակի վերջին խումբագիրը, Սանասարեան վարժարանի առաջին հայկարան Մեծ. Տիար Յ. Գուրգէն:

Ազգային Ժողովը նոյնպէս հաւանութեց Բաղաքական Ժողով մը, ում կ'ատենապետէ Բարձրապատիւ Արթին Փաշա Տատեան թէ սղգային եւ թէ միջազգային դիւանագիտաց պատմական դահլիճին մէջ նախատահմանեալ է ապար եւ ընդօրինակելի Դէմքերէն մին հան դիտանալ:

Իր տեսակին մէջ հոտորնոյն այս Բաղաքական Ժողովոյն կանգնածակցին Ազգին վարչային մասնագէտներէն Վսեմ. Տեառք՝ Տիգրան Էֆ. Եւսուֆեան, Գարրիէլ Էֆ. Նորատունկեան, Իլիաս պէյ Չայեան, Զարեհ Էֆ. Տիւլէր, Սեպուհ Էֆ. Տէմիրճիպաշեան, Գրիգոր Էֆ. Գարակէօզեան, Միհրան Էֆ. Սէթեան, Գրիգոր Էֆ. Խարեան, Կարապետ Էֆ. Գաբամաճեան, Տիգրան Էֆ. Ներսէսեան. Մկրտիչ Ասատեան Էֆ.:

Գերադրապէս ուրախ եմք որ սոյն Ժողովին մասնակցիլ քուէարկած են նաեւ Ազգին և Սղգային Հիւանդանոցին անգլագական բարերարներէն Սենեքերիմ Էֆ. Մանուկեան:

«Հանրագիտակ»ի խմբագրութիւնը եթէ փափարի կամ մարմնի պէս բան մ'ունի յայտնելիք այն ալ Ազգային Բաղաքական Ժողովոյ սոյն չքեղ շրջանա-

կին մէջ հանրային եւ վարչային համարմանն ու համակրանաց արժանաւոր Դէմքերէն Վսեմ. Յ. Նուրեան եւ Մ. Մամիկոնեան Էֆէնտիներու որոնելի պակասն եւ նշանակելի պարապը տեսնելն է:

Ազգային Ժողովն ընտրեց նաեւ Կրօնական Ժողով մը՝ Ում պէտք էր որ ատենապետէր Ազգընտիրն Մելքիսեդեկ Սրբազան Մուրատեան, Կրօն Ազգին ընդհանուր Հայոց Կաթողիկոսութեան և Պօլսոյ Պատրիարքութեան չընդունելութիւնը պատմական սրբագրելի վրիպակներէն և յիշատակելի սխալանքէն մին պիտի մնայ:

Մենք լուս ևս կը դատենք որ միշտ մնայ պարզօրէն Հոգեշունչ Բարոյիչ այլ Ժողովուրդին և որբազան հեղինակ Ազգային Կեղեցւոյն պատմութեան, իօնեայն նուիրապետու ո'ր աստիճանին վրայ աշակրի պարաքը կա և կարող է:

Ժողովոյ Սրբազան Հարց Սնձինք արգէն Հանրաժողով և «Հանրագիտակ»ի սոյն թերթը զանոնք մանրամասնօրէն յիշատակելու և անոնցմէ մէն միայն նրկատմամբ խմբագրական նախատիրումները յայտարարելու համար առաջին սոյն թերթին ճիւղակները նեղ դալուն պատճառաւ, կը յետաձգէ զայն զալ թերթերու մէջ լուս եւս կենսագրել:

Ազգային Երեսփոխանութիւնը ընտրեց նաեւ Պատրիարք մը, որ կը կոչուի Ամեն. Տ. Տ. Պրմանեան Մաղարիտ:

Կը մտղթենք որ մեր սոյն Նորնոյր Պատրիարք չի կրէ պատրանք, զոր ունեցան Թաքթաքեան Պօլսո, Խրիմեան Մկրտիչ (այժմ ընդհանուր Հայոց Հայրապետ), Սնմահն Դերսէս Վարժապետեան, Աշըրեան Խօրէն, Իլմիրլեան Մատթէոս եւ այլ Պատրիարքունք:

Կը բարեմտղթենք նաեւ որ ընդմէջ Ազգին եւ Տէրութեան կատարէ բարուք պաշտօնն այն Միջնորդի որպէս տահմանագրած են Ազգային Օրէնքն ու Ազգային Ժառանգական Աւանդութիւնը ու Դաւանութիւնը:

The first of the year was a very dry one, and the crops were much injured by the drought. The weather was very hot, and the ground was very dry. The crops were much injured by the drought, and the weather was very hot.

The second of the year was a very wet one, and the crops were much injured by the rain. The weather was very cold, and the ground was very wet. The crops were much injured by the rain, and the weather was very cold.

The third of the year was a very dry one, and the crops were much injured by the drought. The weather was very hot, and the ground was very dry. The crops were much injured by the drought, and the weather was very hot.

The fourth of the year was a very wet one, and the crops were much injured by the rain. The weather was very cold, and the ground was very wet. The crops were much injured by the rain, and the weather was very cold.

The fifth of the year was a very dry one, and the crops were much injured by the drought. The weather was very hot, and the ground was very dry. The crops were much injured by the drought, and the weather was very hot.

The sixth of the year was a very wet one, and the crops were much injured by the rain. The weather was very cold, and the ground was very wet. The crops were much injured by the rain, and the weather was very cold.

The seventh of the year was a very dry one, and the crops were much injured by the drought. The weather was very hot, and the ground was very dry. The crops were much injured by the drought, and the weather was very hot.

The eighth of the year was a very wet one, and the crops were much injured by the rain. The weather was very cold, and the ground was very wet. The crops were much injured by the rain, and the weather was very cold.

հեղինակաց քննադատական վերլուծումն ու անոնց հանձարը ցողացնող գեղեցիկ ու վսեմ կտորներէն մերթ ընդ մերթ թարգմանելով դնել թերթիս մէջ:

«Հանրագիտակ»ը քիչ ատենէն հանրագումար բոլոր Ազգային կրօնական ու աշխարհական Անձանց ու Անձնուհեաց կենսագրութիւններն իրենց պատկերներով հանդերձ: Վերջապէս «Հանրագիտակ»ի Ա. թերթին մէջ «գիտութիւն» վերնագրով յօդուածը մեր թերթին գրկած ու հրատարակելի նիւթերուն վրայ ընթերցողին լուսարար առաջնորդ կըրնայ լինել:

«Հանրագիտակ»ը պիտի յարգէ Ազգային և ոչ-ազգային Հասարակութեանց դաւանութիւնքն ու աւանդութիւնքն, միշտ ջերմեռանդ ոգի մը պիտի ներշնչէ առողջամիտ գաղափարներ, բարոյարար ծանօթոյք, ակնուարար զգացումներ, լուսաւորող, քաղաքակրթող իմաստուն ու կորովի մտածումներ, իւր ընթերցողաց ամեն կարգի ճաշակները, ընթերցասիրութիւնը գոհացնելու չափ, եւ քիչ մ'ալ խոնարհաբար հատկցնելու չափ դիմազուրկ Ուսանց թէ Ազգին օգտին ծառայելու մենք այս կերպ կըմբռնենք:

Մին եւս այն Ազգայիններէն, որք Սէնէարայ աշտարակը տեսնող Հայկէն մինչեւ էյֆէլի Աշտարակն այցելող Հայը՝ չատերէ շատ աւելի կը ճանչեն իրենց Ազգը. եւ հետեւաբար Անոր օգուտը: Սակայն Ազգային օգուտն եւ Ազգի անունը մեզ դիմակ չընենք մեր անձին ու օտարին չահն առաջ բռնելու եւ ազգն ու մեզ ալ վրայ մայրու:

Բնական է որ քիչ պիտի ունենանք Ազգային եւ Քաղաքական լուրեր. զոր արդէն մեր Պատուական Օրաթերթը՝ չնորհիւ իրենց մեզուաշան Բանբերաց առատօրէն կը հաղորդեն: Մանաւանդ Անոնցմէն Հայ Մամուլն փառքն աւելի փայլեցնող նորհաստատ Բէլ-շէրտէն Հայթերթն՝ որուն թարմ, հատընտիր, «բնական» լուրերուն առատութիւնն աչքերդ կը խողեն. եւ՝ օր նոր, ի նորոյ կը բազմապատկենք: Տեղն է աստ շնորհաւորել մեր Տաղանդաւոր Բարեկամին՝ Տիար Բէյեան Բուզանդայ Բէլ-շէրտէն, որով Հայ Օրագրութիւնը զարգացման նոր թուական մը թեւակոխեց:

Սակայն կարեւորագոյն Ազգալուրք եւ քաղաքալուրք պիտի հաղորդուին:

— Գաւառաց աղքատագոյն վարժարանաց համար մէյմէկ թերթ Հանրագիտակ ձրի կամ նուէր պիտի յղենք, դասագրեանց պակասը կերպով մը լեցնելու ի նպաստ:

— Թղթակցութիւնք եւ անձնական նամակներն յղուելու են. առ Խմբագրութիւն Հանրագիտակի, Պապը-Ալի ճատտէսի, Գայսէրեան Գասպար էֆէնտիի Տպագրատունը, ուր է նաեւ Հանրագիտակի կեդրոնատեղին:

— Մասնաւորապէս ներումն կը խնդրուի Ազնիւ ընթերցողներէ այն ակամայ թերեաց մասին, որք անբաժան են նոր սկսուած մարդկային ձեռնարկներէ: Սրբագրելն այս անգամ անհնարին՝ ակամայ սպրտուած տառասխալները գալ թերթով ուղղելի:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԵՆ

ՄՐՏԱԲՈՒՂԽ ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

Առ Ազգային եւ առ Միջազգային քաղաքակիրք Մամուլն՝ որ համակրանօք հուշակեց զ'իւր Կայսերական Առանձնաւանդ:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Մեծապատիւ Արթաքի էֆ. Յարութիւնեան՝ իր զբաղմանց ծանրութենէն ստիպեալ, թողած է Հանրագիտակին Յրուիչ գործակատարի պաշտօնը՝ որով ինք առաջին թիւէն սկսեալ ո' եւ է մասնակցութիւն չունի թէ Հանրագիտակի թէ Արտօնագիր Խմբագրին վերաբերեալ ո' եւ է գործոց հետ, բաց ի անձնական բարեկամութենէ:

Հետեւապէս կը ծանուցուի Հանրագիտակն ընդունող ամէն կարգի Պատուրաժան Ընթերցողաց եւ կը խնդրուի որ առանց մեր գրաւոր կամ անձնապէս հաճութեան, ս եւ է մէկու մը բաժանորդագին չի յանձնել հաճին:

